

ԿԱՐԾԻՔ

ՄԵՐԻ ՌԱՖԻԿԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ. ՄԵԴԻԱՏԻՐՈՒՅԹԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ
ԱՌԱՋԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

Մերի Թադևոսյանի ատենախոսության թեման հետաքրքիր է և արդիական, քանի որ ներկայումս ձևավորված նոր մեղիամիջավայրում գոյություն ունեն մի շարք միտումներ, որոնց մինչև այժմ խորությամբ անդրադարձ չի կատարվել: Աշխատանքում ներկայացված հետազոտությունը հենց այդ վերափոխումների մասին է:

Ատենախոսությունը բաղկացած է երկու գլուխներից, ունի ներածություն, աշխատության հիմնական դիտարկումներն ի մի բերող եզրակացություններ և օգտագործված գրականության ցանկ, որտեղ ընդգրկված են ինչպես հայրենական, այնպես էլ այլազգի հեղինակների ուսումնասիրություններ: Աշխատանքի հավելվածում ներկայացված են որոշ հիմնական հասկացությունների սահմանումներ: Այն ունի նաև տերմինաբանական բառարան: Սա ատենախոսություններում տարածված և միանգամայն տեղին ու գիտական կառուցվածք է և ընդգծում է գիտական շարադրանքի բովանդակությունը:

Աշխատանքում հեղինակն անդրադարձել է տեղեկատվական հասարակության առանձնահատկություններին, տեղեկատվական հոսքերի և ԶԼՄ-երի համեմատությանը, թե ինչ փոփոխություններ են ի հայտ գալիս լրատվադաշտում սոցիալական ցանցերի՝ այսպիսի մեծ մասսայականություն վայելող ժամանակաշրջանում: Անդրադարձ է կատարվում նաև այն հիմնախնդրին, թե տեղեկատվական հոսքերն ինչպիսի ազդեցություն են ունենում անձնական և ազգային անվտանգության ոլորտում: Նաև դիտարկվում են այն միտումները, որոնք նկատվում են ավանդական մեղիատիրույթում:

Ատենախոսության թեման արդիական է, քանի որ այսպես կոչված տեխնոլոգիական մրցակցության դարաշրջանում ավանդական լրատվամիջոցները վերակազմավորվում են, տեղի է ունենում դերերի վերաբաշխում, իսկ այս վերափոխումները համապարփակ ուսումնասիրության առարկա դեռ չեն հասցել դառնալ, հետևաբար սա բաց ոլորտ է: Տեղեկատվական հոսքերն այսօր այնպիսի թափով են զարգանում, որ այդ ոլորտի ուսումնասիրություններում անզամ ամիսների կտրվածքով թարմություն է պահանջվում: Ուստի ատենախոսության

ուսումնասիրության առարկան կարծում ենք տեղին է ընտրված նաև այն առումով, որ հստակեցված է ուսումնասիրության շրջանակն ու ժամանակահատվածը:

Տետազոտության նպատակն է ուսումնասիրել ժամանակակից տեղեկատվական հոսքերը, մասնավորապես զանգվածային լրատվամիջոցներում, թե ինչպիսին են դրանց ձևավորման և գոյության առանձնահատկությունները, որոնք են մեղիատիրույթի վերափոխման առանձնահատկությունները, և ինչպես են այդ փոփոխություններն ազդում տեղեկատվական հոսքերի վհճակի վրա:

Այնենախոտության խնդիրներն են՝ բացահայտել տեղեկատվական հոսքերի հիմնական բնութագրերը՝ զլորալիզացված տեղեկատվական տիրույթի համատեքստում, հայտնաբերել նոր մեղիամիջավայրի առանձնահատկությունները և դիտարկել «հրապարակիչների ջոկատի» կայացման հարցը, բացահայտել լրատվամիջոցների «վերադիրքավորման» խնդիրը և անդրադառնալ այն գործառությունը՝ փոփոխություններին, որոնց ենթարկվում է լրագրողի մասնագիտությունը, պարզել Հայաստանի ԶԼՄ-ներում տեղեկատվական հոսքերի առանձնահատկությունները:

Աքաջին զլուխը, որը կոչվում է «Տեղեկատվական հոսքերը և դրանց զարգացման միտումները», նվիրված է հիմնական մեղիա հասկացությունների հարաբերակցության հարցի ուսումնասիրությանը և հեղինակի բնորոշմամբ՝ այն խառնաշփոթին, որ կա այս ոլորտում: Կարծում ենք՝ որ տերմինարանական համարժեքության խնդիրը կարևոր է և դրա հստակեցումն անհրաժեշտ: Սակայն՝ առաջին զլխում տեղ գտած «Տեղեկատվական հոսքեր և լրագրության ժամանակակից տեսության հայեցակարգային և կատեգորիալ ապարատը» զլխի տերմինարանական վերլուծությունները փոքր-ինչ ձգձգված են, հեղինակը հաճախ շեղվում է ատենախոտության բուն նպատակից: Միևնույն ժամանակ գովելի է այն, որ հայաստանյան տեղեկատվական հոսքերը հեղինակը դիտարկում է համաշխարհային մեղիագործընթացների համատեքստում:

Երկրորդ զլխում, որը կոչվում է «Ժամանակակից մեղիատիրույթի և տեղեկատվական համակարգերի փոխակերպումը տեղեկատվական և տեխնոլոգիական առաջընթացի դարաշրջանում», ներկայացվում է ժամանակակից մեղիամիջավայրը, որ այն նախ ցանցային տարածք է՝ զինված տեխնիկական նոր հնարավորություններով, անդրադարձ է կատարվում նաև ԶԼՄ-ների «վերադիրքավորման» անհրաժեշտությանը, հայաստանյան մեղիատիրույթում:

տեղեկատվություն գեներացնող դերակատարներին, լրագրողի մասնագիտության և լրագրողի նկատմամբ պահանջների փոփոխությանը:

Մերի Թաղեռայանի ատենախոսությունում փորձ է կատարվում Հայաստանի մեղիատիրույթում տիրող քազմաբնույթ և տեղեկատվական քառային հոսքերը ենթարկել կառուցվածքային ու համակարգային ճշգրտման, բացահայտել տեղեկատվական հոսքերի բնութագրերը, դիտարկել այն մարտահրավերները, որոնց առաջ այսօր կանգնած է մեղիատիրույթը:

Գովելի է, որ հեղինակը մշակել է մի շարք նախաձեռնություններ և առաջարկներ, սակայն բաց է մնացել լրատվադաշտի ինքնակարգավորման ոլորտը: Որոշ վերապահումներով կարելի է մոտենալ նաև այն առաջարկներին, որոնք վերաբերում են տեղեկատվական համակարգի կառավարման անհրաժեշտությանը: Ըստ հեղինակի՝ տեղեկատվական քաղաքականությունը պետք է պետական մարմինների պատասխանատվության առարկա լինի, սակայն այս առաջարկի իրականացման դեպքում կան ռիսկեր պետական տեղեկատվական քաղաքականությունը՝ որպես զրաքննության գործիք օգտագործելու առումով: Այս հանգամանքը թերևս պետք է ավելի խորությամբ դիտարկել:

Ատենախոսությունում բարձրացված բոլոր խնդիրները, դրանց լուծման ձանապարհների վերհանումն ավելի արժեքավոր է դարձնում հետազոտությունը, ցույց տալիս, որ հեղինակն ընդհանուր առմամբ տիրապետում է նյութին: «Ժամանակակից տեղեկատվական հոսքերը Հայաստանի ԶԼՍ-ներում մեղիատիրույթի վերափոխման առանձնահատկությունները» աշխատանքն իսկապես արժեքավոր է և նորություն իր ընդգրկումով: Ուստի կարծում եմ՝ Մերի Թաղեռայանն արժանի է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

30.06.2021թ.

Խ. Հ. Հ.

Տաթևիկ Հարությունյան

բանասիրական գիտությունների թեկնածու

Ա. Կայազարյանի սպասությունը բարերար հասցեամբ 05
Հ. Շ. Գրիգորյան գրադարանի կողմէ պատճենահանությունը գ. Կոխեվիչ

